

**ՀՀ Ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 15/7**

**9 սեպտեմբերի 2014 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Բագրատ Մկրտչյանի գանգատը ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ 31.07.2014 թ-ի թիվ 6101019 ստուգման ակտի դեմ:

**Ա/Ձ Բագրատ Մկրտչյանի գանգատում բերված փաստարկները.**

էրեբունու հարկային տեսչության աշխատակիցների կողմից 31.07.2014 թ-ին կազմվել է թիվ 6101019 ակտը, որում մասնավորապես նշված է. «հիմք ընդունելով տնտեսվարող սուբյեկտի մոտ ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի 08.07.2014 թ-ի թիվ 6101019 հանձնարարագրով կատարված հսկիչ գնման ուսումնասիրության արդյունքում 03.07.2014 թ-ին կազմված թիվ 6200875 արձանագրությունը, որով արձանագրվել է տնտեսվարող սուբյեկտի կողմից ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջների խախտման փաստը, և ղեկավարվելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի և «Սևիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով՝ Բագրատ Մկրտչյան Ա/Ձ-ին (ՀՎՀՀ 23185593) «Սևիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով»:

Նշված ակտի հետ Ա/Ձ Բագրատ Մկրտչյանը համաձայն չէ, քանի որ այն կազմվել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի խախտումներով:

Այսպես՝

Ակտը կազմելիս հարկային տեսուչները հղում են կատարել ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի 08.07.2014 թ-ի թիվ 6101019 հանձնարարագրով կատարված հսկիչ գնման ուսումնասիրության արդյունքում 03.07.2014 թ-ին կազմված թիվ 6200875 արձանագրությունը, որում մասնավորապես նշված է. «ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ հարկային տեսուչ Հակոբ Հակոբյանը 03.07.2014 թ-ին ժամը 11:55-ին ք.Երևան, Չարենցի 48 հասցեում գործող Բագրատ Մկրտչյան Ա/Ձ-ին (ՀՎՀՀ 23185593) պատկանող մարտկոցների վաճառքի կետում կատարված ծառայության դիմաց (մարտկոցի լիցքավորում) վճարեցի 1000 դրամ կանխիկ գումար, որը չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց /հավելված 1/: Մեր կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև, ժամը 11:59-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց Z հաշվետվություն, որում հասույթը կազմում էր 77.000 դրամ և մեր պահանջով չմուտքագրված գումարը՝ 1000 դրամ, ժամը 12:00-ին մուտքագրվեց ՀԴՄ: Ժամը 12:00-ին նորից դուրս բերվեց Z հաշվետվությունը՝ 1000 դրամ ընդհանուր հասույթով: Ուսումնասիրությամբ պարզվեց, որ Բագրատ Մկրտչյան Ա/Ձ-ի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «գ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Սևիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով»:

Այդ օրն իրոք կատարվել է նման ծառայություն, սակայն ծառայություն ստացողը Հակոբ Հակոբյանը չի եղել: Հանձնարարագրում նշված բոլոր անձանց Ա/Ձ Բագրատ Մկրտչյանը ճանաչում է, և նրանցից որևէ մեկն իր կողմից չի ստացել ծառայություն և չի վճարել 1000 դրամ: Ծառայություն ստացողը եղել է մեկ այլ անձ, ով չի ներկայացել և չի ներկայացրել

ծառայողական վկայական: Այդ անձի անունը նշված չէ ոչ հանձնարարագրում, ոչ էլ կազմված արձանագրության մեջ:

Ըստ գանգատի, Ա/Ձ Բագրատ Մկրտչյանն իրականացնում է մարտկոցների առք ու վաճառք, իսկ լիցքավորումը կատարվում է միայն իր խանութից գնված մարտկոցների համար՝ անվճար: Տվյալ դեպքում խնդրանքների տարափից հետո Ա/Ձ Բագրատ Մկրտչյանը լիցքավորել է այդ մարտկոցը, իսկ անձի հարցին, թե որքան պետք է վճարի ծառայության դիմաց, Ա/Ձ Բագրատ Մկրտչյանը պատասխանել է, որ վճարելու կարիք չկա: Այդ անձը ուղղակի 1000 դրամ թողնելով դուրս է եկել խանութից և Ա/Ձ Բագրատ Մկրտչյանը չի հասցրել նրան վերադարձնել այդ գումարը: Այնուհետև, ներս են մտել հարկային տեսուչները և հայտնել, որ դա հսկիչ գնում էր:

Հսկիչ գնման արձանագրության մեջ նշված է՝ «... դուրս բերվեց Z հաշվետվություն, որում հասույթը կազմում էր 77.000 դրամ և մեր պահանջով չմուտքագրված գումարը՝ 1000 դրամ, ժամը 12:00-ին մուտքագրվեց ՀԴՄ...»: 1000 դրամը ոչ թե առաջարկվել է մուտքագրել, այլ մուտքագրվել է տեսուչների կողմից առանց Ա/Ձ Բագրատ Մկրտչյանի գիտության:

Կատարված հսկիչ գնումից անմիջապես հետո հսկիչ գնում կատարած անձի կողմից չի կազմվել արձանագրություն հսկիչ գնման վերաբերյալ, որին պետք է մասնակցեր նաև գանգատաբերը: Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ փոստի միջոցով ստացված ծրարում և կից գրության մեջ բացակայում է դրա մասին հիշատակումը:

Ստուգման ակտի նախագիծը կազմվել է 08.07.2014 թ-ին, փոստի առաքումով հանձնվել է 10.07.2014 թ-ին, իսկ ստուգման ակտը կազմվել է 31.07.2014 թ-ին և հանձնվել է 02.08.2014 թ-ին:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի համաձայն ակտի նախագիծը կողմին հանձնելուց հետո 5 աշխատանքային օրյա ժամկետում գանգատաբերը պետք է ներկայացներ առարկություն, որը չի արել: Այնուհետև, 5-րդ աշխատանքային օրը լրանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պետք է կազմվեր ակտը և հանձնվեր գանգատաբերին: Տվյալ դեպքում չի պահպանվել օրենքի նշված պահանջը, քանի որ ակտի նախագիծը հանձնվել է 10.07.2014 թ-ին, որից հետո 5-րդ աշխատանքային օրը լրացել է 17.07.2014 թ-ին, հետևապես ակտը հանձնվելու 3-րդ աշխատանքային վերջին օրը համարվել է 22.07.2014 թ-ը, սակայն այն կազմվել է 31.07.2014 թ-ին:

Հաշվի առնելով շարադրված հանգամանքները գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել նշված վարչական ակտը:

### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն էրեբունու ՀՏ պետի 09.06.2014 թ-ի թիվ 6200875 հանձնարարագրի Ա/Ձ Բագրատ Մկրտչյան մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում, 03.07.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6200875 արձանագրությունը, որով արձանագրվել է ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «գ» ենթակետի պահանջների խախտման փաստ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի կողմից 08.07.2014 թ-ին հրապարակվել է թիվ 6101019 հանձնարարագիրը, որի համաձայն Ա/Ձ Բագրատ Մկրտչյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում:

Արդյունքում 08.07.2014 թ-ին կազմվել է ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ թիվ 6101019 ստուգման ակտի նախագիծը, իսկ 31.07.2014 թ-ին՝ ստուգման ակտը:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ 31.07.2014 թ-ի թիվ 6101019 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ) կազմվել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով նախատեսված ժամկետների խախտմամբ: Մասնավորապես, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը: Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին»:

Քննարկվող դեպքում ստուգման ակտի նախագիծը կազմվել է 08.07.2014 թ-ին և փոստային առաքմամբ ուղարկվել է Ա/Ձ Բագրատ Մկրտչյանին: Ստուգման ակտի նախագիծը վերջինիս կողմից ստացվել է 10.07.2014 թ-ին: Տվյալ դեպքում, հաշվի առնելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից 5 աշխատանքային օրվա ընթացքում ակտի նախագիծը ուսումնասիրելու ժամկետը, և նշված ժամկետում Ա/Ձ Բագրատ Մկրտչյանի կողմից առարկություններ չներկայացվելու հանգամանքը, ստուգման ակտը պետք է կազմվեր 22.07.2014 թ-ին, սակայն այն կազմվել է միայն 31.07.2014 թ-ին: Այսինքն, ստուգման ակտը կազմվել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետների խախտմամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Ձ Ո Ւ Մ Է՝**

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ 31.07.2014 թ-ի թիվ 6101019 ստուգման ակտը:

**Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝**

**Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ**